

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր հայկազյան բառարանը ոչ միայն բացատրական, թարգմանական, այլև ստուգաբանական բառարան է, քանի որ նրա հեղինակները դուրս են եկել սովորական բացատրական բառարանի շրջանակներից և տվել են ոչ միայն բառի նշանակության բացատրությունը, այլև շատ հաճախ ստուգաբանությունը:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները, հաշվի առնելով իրենց նախորդների՝ Մխիթար Մեբաստացու, Գևորգ Դպիրի և այլ հեղինակների կողմից կատարված գիտական ստուգաբանական փորձերը, իրենք ևս իրենց բառարանում կատարել են բազմաթիվ բառերի ստուգաբանություններ, որոնց շնորհիվ բառարանը ձեռք է բերել ավելի մեծ արժեք և դարձել լեզվաբանական խոշոր նշանակություն ունեցող մի գործ:

Ինչպես գիտենք, հայ ժողովուրդը իր պատմական գոյատևման ու զարգացման ընթացքում ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից փոխադարձ շփման ու երկարատև տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական, կրոնական և այլ կապերի արդյունքում փոխ է առել բազմաթիվ նոր բառեր ու բառակապակցություններ, որոնք հարստացրել են հայոց լեզվի բառապաշարը:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները ճիշտ կերպով ստուգաբանել են հունարենից, լատիներենից, եբրայերենից, ասորերենից, արաբերենից, թուրքերենից և այլ լեզուներից փոխառյալ շատ բառեր, ինչպես նաև տվել են բազմաթիվ բառերի համեմատություններ տարբեր լեզուների համապատասխան ձևերի հետ:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները բառարանում առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանել են բազմաթիվ բառեր: Ըստ պրոֆ. Ռ. Ղազարյանի հաշվումների, որը դրանք կատարել է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» ընձեռած բազմակողմանի տվյալների համաձայն, ավելի քան 530 բառ առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանել են Նոր հայկազյան բառարանի հեղինակները:

Այդ ստուգաբանությունները, որոնց մեծ մասը արդի պատմահամեմատական մեթոդի տեսակետից միանգամայն ընդունելի է, կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են բնիկ բառերի ստուգաբանությունները, իսկ երկրորդ խմբի մեջ՝ փոխառյալ բառերի ստուգաբանությունները:

Այժմ առանձին ներկայացնենք այդ երկու խմբերի բառերի ստուգաբանությունները:

Բնիկ բառերի ստուգաբանությունները

Բնիկ պետք է համարել այն բառերը, որոնք հայերենը ժառանգել է հնդեվրոպական նախալեզվից կամ կերտել է հետագայում իր բառակազմական ներքին միջոցներով:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները ստուգաբանել են մի շարք բնիկ բառեր, ո-

րոնց զգալի մասը թեև պարունակում է շատ անճշտություններ, սակայն դրանք չեն նսեմացնում բառարանի արժանիքը, քանի որ դրանց կողքին կան այնպիսի ճիշտ ստուգաբանություններ, որոնք արժանի են հատուկ ուշադրության: Բերենք ճիշտ ստուգաբանություն ունեցող բնիկ բառերից մի քանի օրինակներ.

Առագաստ՝ «վարագույր, վերևից ներքև ձգված ծածկոց, հարսանեկան սենյակ, նավի առագաստ». կազմված է ազ արմատից՝ առ և աստ մասնիկներով:

Երեկ՝ «երեկվա օրը». որոյ երեկոյն էանց կամ երեկ. այսինքն՝ արդէն եկն. իտալ. hieri, jeri: Զարդ՝ «հիմա». կազմված է զ մասնիկով արդ արմատից:

Նոր հայկազյան բառարանի հեղինակների կողմից ստուգաբանված բնիկ բառերի թիվը ավելի շատ է: Այստեղ ներկայացնենք նաև այն մի քանի բառերը, որոնք Չ. Աճառյանը կոչում է հայակերտ, և որոնք առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանել են Նոր հայկազյան բառարանի հեղինակները:

Զգալ՝ «իմանալ, հասկանալ, զգաստանալ». կազմված է զ նախդիրով՝ գալ բայից:

Յատուկ՝ «գատված, բաժանված». կազմված է յատ=հատ «կտրել, բաժանել» արմատից՝ -ուկ մասնիկով:

Չակերտ՝ «կետադրական մի նշան, որ է ««». կազմված է չա և կերտ բառերից՝ իբր թէ չա բառի գլխի ձևով կերտված նշան:

Ցայգ «գիշեր». կազմված է ց նախդիրով այգ «առաւօտ» բառից, ինչպես ցերեկ՝ ց նախդիրով երեկ բառից: Առաջինը նշանակում է բուն «մինչև առաւօտ եղած ժամանակը», երկրորդը՝ «մինչև երեկոյ»:

Փոխառյալ բառերի ստուգաբանությունները

Շայ ժողովուրդը իր պատմական գոյատևման ու զարգացման ընթացքում ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից՝ փոխադարձ և երկարատև տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական, կրոնական և այլ կապերի արդյունքում փոխ է առել բազմաթիվ նոր բառեր ու կապակցություններ, որոնք հարստացրել են մեր լեզվի բառապաշարը:

Շայտնի է, որ փոխառությունները կատարվում են երկու ճանապարհով՝ բանավոր և գրավոր: Բանավոր փոխառությունները կատարվում են խոսակցական հարաբերության միջոցով, իսկ գրավոր փոխառությունները՝ հիմնականում գրականության միջոցով: Ըստ այդմ էլ փոխառյալ բառերը լինում են ժողովրդական և գրական, որոնք իրենց հերթին կարող են լինել անմիջական (ուղղակի) և միջնորդական (անուղղակի): Անմիջական կամ ուղղակի են այն փոխառությունները, որոնք հայերենը իր պատմական զարգացման ընթացքում փոխ է առել անմիջապես փոխատու լեզվից, առանց երրորդ լեզվի միջնորդության: Միջնորդական կամ անուղղակի են կոչվում այն փոխառությունները, որոնք փոխատու լեզվում նույնպես փոխառություն են մի այլ լեզվից:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները ճիշտ կերպով ստուգաբանել են բազմաթիվ բառեր՝ իբրև փոխառություններ հունարենից, լատիներենից, եբրայերենից, ասորերենից, արաբերենից, թուրքերենից և այլ լեզուներից:

Ըստ Ռ. Ղազարյանի հաշվումների՝ Նոր հայկազյան բառարանում ավելի քան 600 բառեր տրված են փոխառության նշումով, և ինչպես հատուկ է ստուգաբանական բա-

նարաններին, այստեղ նույնպես նշվել է փոխատու լեզուն: Այսպես, օրինակ.

Կիտրոն, բառ. հուն. κίτριον, χιτρία. Malum citrium, citromela, arbor citria. Ծառ և պտուղ նորա՝ որպես խոշոր լեմոն, կամ իբր վարունգ թանձր. և որպես սեխ փոքր. աղած գավունու:

Ինչպես տեսնում ենք, որպես օրինակ բերված կիտրոն բառը որոշակի կերպով փոխառություն է համարվում հուն. κίτριον «կիտրոն» բառից, ինչը միանգամայն ճիշտ է:

Այժմ հերթականությամբ ներկայացնենք տարբեր լեզուներից փոխառված բառերի ստուգաբանությունները:

Հունական փոխառություններ

Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել մեր թվարկության 3-4-րդ դարերից սկսած մինչև 10-11-րդ դարերը: Հունական փոխառությունները հիմնականում կատարվել են գրական-գրքային ճանապարհով, գիտության, գրականության և եկեղեցու միջոցով: Հունարենից փոխառած 918 բառերից ժամանակակից հայերենում գործածական են 130 բառեր:

Նոր հայկազյան բառարանում ամենամեծ թիվը կազմում են հունարենից փոխառված բառերը: Ըստ բառարանի հեղինակների՝ այդ թիվը հասնում է շուրջ 410-ի: Հարկ է նշել, որ այս և սրանից հետո ներկայացվող վիճակագրական տվյալները բերում ենք Ռ. Ղազարյանի «Էջեր հայ բառարանագրության պատմությունից» գրքից:

Նոր հայկազյան բառարանի հեղինակների կողմից ստուգաբանված հունարեն բառերը կազմում են տարբեր իմաստային խմբեր, որոնք ներկայացնում են հետևյալ պատկերը.

1. Պետական- վարչական կյանք, ծառայություն, պաշտոն, տիտղոս.

Դիաթիկ «կտակ». հուն. διαθήκη «կտակ 2. Հին կամ Նոր կտակարան»

Պրակտոր «հարկահան». հուն. πράκτωρ «հարկահավաք»:

2. Կրոն.

Արքիդիակոն «ավագ սարկավագ». հուն. ἄρχιδιάκων «ավագ սարկավագ»:

Իկոն «հունաց եկեղեցական պատկեր». հուն. δίακωσ, միջին հուն. Εείχόσα «սրբի նկար»:

Կերոն «եկեղեցու մեծ մոմ». հուն. κηρός «մեղրամոմ, կերոն»:

Տելետի «սրբազնագործություն, նվիրագործություն». հուն. τελετή «արարողություն, ծես 2. զոհ, պատարագ 3. խորհրդագրագծություն. 4. քահանայություն 5. քավություն»:

3. Ֆիզիկական աշխարհ.

Դիատոն «ասուպ». հուն. διάκτων

Եպիկլինտ «մի տեսակ երկրաշարժ». հուն. ἐπικλίντης «մի տեսակ երկրաշարժ, որ հողը սուր անկյունով տեղափոխում է»:

4. Բժշկություն

Ափիմեոնիստ «ամենօրյա ջերմ, տենդ», հուն. ἀφμερινός «ամենօրյա ջերմ»:

Տոքսա «թունավոր», հուն. τοξίχόν «նետերը թունավորելու համար թույն»:

5. Բույսեր.

Անիսոն «մի տեսակ բույս և նրա սերմը կամ հունդը». հուն. ἄνισον

- Լիմոն «լիմոն». հուն. λιμόνι, λιμόνιον, λεμόνι
6. Կենդանիներ.
Աստակող «խեցգետին». հուն. ἄσταχος «խեցգետին»
Դելփին «ծովային մի մեծ ձուկ է». հուն. δελφίς, δελφί n «դելփին»
Դոակոն «վիշապ կամ մի տեսակ մեծ ձուկ, վիշապաձուկ». հուն. δράκων «վիշապ օձ, վիշապաձուկ»:
7. Կենցաղ.
Կիփաս «մեծ բաժակ». հուն. Σχύψοζ «մեծ բաժակ»
8. Ուտելիք և ըմպելիք.
Քիդոս «կերակուր». հուն. Χιλόζ «չոր կամ դալար խոտ»
9. Ընտանիք և ընկերություն.
Գենեսիս «հարազատ». հուն. γνή ποζ «հարազատ»
10. Գիտություն, արվեստ.
Մաթեմատիկոս «ուսումնական, ուսող». հուն. μαθηματικός «ուսումնասեր, 2. ուսողական, չափագիտական, 3. չափագետ»:

Հունական փոխառություններից անբաժան պետք է համարել նաև այն բառերը, որոնք հայերենը փոխ է առել լատիներենից: Այդ բառերը պետք է համարել միջնորդավորված կամ անուղղակի փոխառություններ, քանի որ դրանք հայերենը փոխ է առել ոչ թե ուղղակի լատիներենից, այլ հունարենից: Այդ մասին մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանը գրում է. «Բյուզանդական կայսրության ժամանակ հունարենը մեծապես ազդվեց լատիներենից և ինքը եղավ միջնորդ նույն լատինական բառերը տարածելու իր տիրապետությանը շրջանում, բայց այս անգամ հունական կերպարանքի տակ: Լատինական բառերի մի մասը, որ հռովմայեցիներից անցել էր հայերենի, հունական ազդեցությամբ ստացավ նոր կերպարանք և այլևս անճանաչելի դարձավ, և այսօր մենք, երբ քննում ենք այդ բառերը, գտնում ենք ավելի հունաձև, քան լատինաձև և համարում ենք հունական փոխառություն»¹:

Բերենք այդ բառերի մի քանի օրինակներ, որոնք առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանել են Նոր հայկազյան բառարանի հեղինակները: Դրանցից են հատկապես ժամանակ ցույց տվող բառերը, ինչպես նաև այլ կարգի բառեր: Այսպես.

Ընդիկտիոն «տասնհինգ տարիների մի շրջան». հուն. ἑνδικοτίων

Հոկտեմբեր «մարտից հաշված ութերորդ ամիսը». հուն. ὄχτωβριος

Բիկար կամ բեկար «փոխանորդ արքայի կամ մեծ իշխանի» հուն. βίχαριος, οὐχάριος նույն նշ., որ փոխառեալ է լտ. vicarius հոմանիշից:

Լատինական փոխառություններ

Նոր հայկազյան բառարանի հեղինակները լատիներենից փոխառված են համարել մոտավորապես 54 բառ: Դրանցից են՝

Բուլ «պապական կոնդակ». լտ. bulla «կնիք, պապական կոնդակ»:

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հտ. 1, Երևան, 1940, էջ 326: Հմմտ. H. Šbbschmann, Armenische gram., էջ 325:

Պառոխի «ծխաստեր քահանա». լտ. parochus «տաներեց»:

Եվրոպական փոխառություններ

Նոր հայկազյան բառարանում եվրոպական են համարվել 8 բառեր, որոնցից 7-ը ֆրանսերեն են, մեկը՝ իտալերեն:

Ինչպես գիտենք, հայ-ֆրանսիական հարաբերությունները սկիզբ են առել բուն Հայաստանից դուրս՝ Կիլիկիայում, որտեղ Բագրատունիների թագավորության անկումից հետո ստեղծվել էր հայկական ինքնուրույն թագավորություն, որի պաշտոնական լեզուն դարձել էր կիլիկյան հայերենը:

Ֆրանսիական փոխառությունների ճնշող մեծամասնությունը հիմնականում կատարվել են 12-14-րդ դարերի ընթացքում, և քանի որ այդ ենթաշրջանը մոտավորապես համընկնում է հին ֆրանսերենի ժամանակաշրջանի (9-14-րդ դդ.) հետ, հետևաբար ֆրանսերենից կատարված փոխառությունների մեջ առանձնանում են այն բառերը, որոնց անմիջական աղբյուրը հին ֆրանսերենն է: Ներկայացնենք Նոր հայկազյան բառարանում տեղ գտած ֆրանսերենից փոխառված բառերից մի քանիսը.

Մարաջախտ «իշխան, զորավար». հին ֆր. marnschalt բառից փոխառեալ է Ռուբինեանց ժամանակ:

Պայլ «ֆրանկների կողմից Կիլիկիոյ Հայոց մեծ իշխանին տրուած պատուոյ տիտղոս». հին ֆր. bail «կառավարիչ, հսկող, դատավոր»:

Սիր «արքա, իշխան». ֆր. sire «տեղ արքայ», որ ծագում է լտ. senior «ծերագույն» բառից:

Ֆրանսերեն փոխառությունների համեմատությամբ փոքր թիվ են կազմում իտալերեն բառերը, որոնցից Նոր հայկազյան բառարանում տեղ է գտել միայն մեկ բառ՝ գունդատալ «արքունի ախոռապետ». իտալ. contestabile:

Արաբական փոխառություններ

Նոր հայկազյան բառարանի հեղինակները արաբերենից փոխառված են համարել 28 բառեր, որոնցից են՝

Ամիրայ «մահմեդական իշխան, կուսակալ». արաբ. amir ձևից:

Բաբ «դուռ». արաբ. bāb «դուռ»: Այս բառը առաջին անգամ ճիշտ է ստուգաբանվել Նոր հայկազյան բառարանում, բայց սխալմամբ համարվել է պարսկերեն:

Կուրան, որ և դուրան. արաբ. qurān նույն նշ.:

Հիննայ «մի տեսակ բույս և նրա ներկը». արաբ. hinna «հինայ»:

Պարսկական փոխառություններ

Նոր հայկազյան բառարանի հեղինակները պարսկերեն շատ բառեր համարում էին փոխառություններ, ի տարբերություն Հ. Պետերմանի, Ֆ. Վինդիշմանի և մի շարք այլ լեզվաբանների, որոնք չէին տարբերակում իրանական փոխառյալ բառերը բնիկներից,

քանի որ հայերենը չէին համարում հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ:

Նոր հայկազյան բառարանում պարսկերենից փոխառված են համարվել 20 բառեր: Այդ բառերը ծագումնաբանորեն կապվում են միջին պարսկերենի՝ պահլավերենի կամ նոր պարսկերենի հետ: Այդ բառերից շատերը առաջին անգամ ճիշտ կերպով ստուգաբանվել են Նոր հայկազյան բառարանում:

Ապուզնայ «կապիկ». պրսկ. *abūzna*, որ և *būzīna*, *puzīna* «կապիկ»:

Բալ «կեռաս, տաճկ. քիրագ, գիլաս». պրսկ. *balū* կամ նաև *ālubālu* «կեռաս»:

Գազար. պրսկ. *gazar* «ստեպոլին, գազար»:

Թաժայ. «թարմ». պրսկ. *tāza* «թարմ, նորահաս»:

Թուրքական փոխառություններ

Նոր հայկազյան բառարանում թուրքերենից փոխառված են համարվել 4 բառեր: Դրանք են՝

Աթաբէկ «թագաւորահայր կամ փոխարքայ». արև թրք. *atābēg* «թագաւորահայր»:

Բէկ «իշխան». թրք. *beg*:

Թօզ «կալի մանրուք, փոշի մղեղ». թրք. *toz* «փոշի»:

Մրմայ «ոսկեթել». թրք. *sırma* «ոսկեթել»:

Ասորական փոխառություններ

Ասորական ազդեցությունը հայերենի վրա կատարվել է դեռևս 5-րդ դարից առաջ: Նոր հայկազյան բառարանի հեղինակների կողմից ասորերենից փոխառված են համարվել միայն 3 բառ՝

Արբա. հուն. *ἀββά*, *ἀββᾶς* որ ծագում է սեմականից. ասոր *ābā*, նշանակում է «հայր»:

Մամոնայ «ինչք, մթերեալ հարստութիւն, սատանայ, դրամ». հուն. *μαμωνᾶ*, *μαμμωνᾶ* կամ ասոր. *māmōna* հունանիշ ձևից տառադարձված՝ Ավետարանի թարգմանության ժամանակ:

Ներ «600 տարւայ մի շրջան». հուն. *ᾤσος* նույն նշ.: Հոյն բառը ծագում է սումեր *nēru* «600 տարւայ շրջան» բառից, որ թերևս փոխառեալ է բաբելականից:

Եբրայական փոխառություններ

Եբրայական ծագում ունեցող բառերը հայերենին են անցել գրականության և առաջին հերթին Աստվածաշնչի միջոցով: Հայտնի է, որ այդ փոխառությունները կատարվել են ոչ թե Սուրբ Գրքի եբրայական բնագրից, այլ պարզապես նրա հունարեն թարգմանության միջոցով, որն էլ հիմք է տալիս ասելու, որ եբրայական փոխառությունները միջնորդավորված են, քանի որ լեզվին են անցել ոչ թե անմիջապես եբրայերենից, այլ հունարենից:

Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» 2-րդ հատորում ներկայացնում է թվով

138 եբրայական փոխառություններ: Նոր հայկազյան բառարանում եբրայերենից փոխառված են համարվել ավելի քան 74 բառեր, որոնք առաջին անգամ ճիշտ են ստուգաբանվել Նոր հայկազյան բառարանի հեղինակների կողմից:

Ակեղդամայ «արեան գիւղ». եբր. aqel «գիւղ» և dām «արիւն» բառից:

Գեհ «փոս, վիհ, գերեզման». եբր. gaia, gēia, gai «ձոր»:

Էլ, Էլոհիմ «Աստված». եբր. ēl «Աստված»:

Համեմատություններ

Նոր հայկազյան բառարանի հեղինակները բազմաթիվ բառերի ստուգաբանություններին զուգընթաց տվել են նաև հազարավոր բառերի համեմատություններ տարբեր լեզուների համապատասխան ձևերի հետ: Ի տարբերություն Մ. Սեբաստացու, Գևորգ Դպիրի բառարանների՝ Նոր հայկազյան բառարանում համեմատության նպատակով օգտագործվել են ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուների տվյալները, որոնք ևս արժեքավորում են բառարանի ստուգաբանական կողմը: Այստեղ ուշադրության է արժանի նաև այն երևույթը, որ Նոր հայկազյան բառարանի հեղինակները առաջին անգամ համեմատություններ են բերում նաև սանսկրիտից, այն դեպքում, երբ այս լեզվի ուսումնասիրությունը դեռ պատշաճ բարձրության վրա չէր գտնվում: Այդպիսի համեմատություններից է, օրինակ՝ բազում «շատ». սանս. պահու բառի հետ, գէս «երկար մագ». սանս. քէսս, գինդ «ականջի օղ». սանս. կունտալա «գինդ, մատանի», գոյն «գոյն, երանգ, ներկ». սանս. guna, ծառ. սանս. թառու: Այժմ բերենք մի քանի բնիկ հայերեն բառերի օրինակներ, որոնք Նոր հայկազյան բառարանի հեղինակները ճիշտ կերպով համեմատել են հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, ռուսերեն և այլ ցեղակից կամ ոչ ցեղակից լեզուների համապատասխան ձևերի հետ: Այսպես՝ գինի. համեմատվում է վրաց. դվինօ, հուն. οἶνος, լատ. vinum ձևերի հետ, դուռ. համեմատվում է հուն. θύρα, պրսկ. dar, սանս. dvār ձևերի հետ և այլն:

Բառարանում կան նաև զգալի թվով փոխառյալ բառեր, որոնք թեև որոշակի կերպով չեն տարբերակվում որպես փոխառություններ, սակայն համեմատվում են տարբեր լեզուների տվյալների հետ: Այդ համեմատություններից են՝ հունարենից փոխառված բեմ «դատաւորական աթոռ», քարոզչական ամբիոն» բառի համար բերվում է սեմական համեմատություն, այն է՝ լծ. եբր. բամա, պամա: Բուրգն «աշտարակ կամ նման բարձր շենք» բառը համեմատվում է հուն. πύργος, լատ. burgus, թուրք. պիարձ, պուռձ, պիարիաձ ձևերի հետ և այլն:

Ճիշտ ստուգաբանությունների հետ միասին, սակայն, քննվող բառարանում կան բազմաթիվ այլ բառեր, որոնց ստուգաբանությունները կատարվում են ոչ բավարար գիտական հիմունքներով: Ռ. Ղազարյանը գրում է, որ «Այդ կարգի ստուգաբանություններն ըստ իրենց բնույթի բաժանվում են 2 խմբի: Առաջին խմբի մեջ կարելի է ընդգրկել այն ստուգաբանությունները, որոնք ենթադրական են և սոսկ այս կամ այն բառի ստուգաբանության սխալ կամ թերևս հնարավոր ուղիներից մեկն են»²: Այդպիսի բառերից

² Ղազարյան Ռ., Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Երևան, 2002, էջ 160:

են. արգահատ «գուրթ». արգանդ բառից. լծ. լտ. rogo, թրք. /իմա՛ արաբ./ raġa «աղաչել»: Բառաչ «ոչխարի կամ տավարի ձայն» բառը, որն Աճառյանը համարել է բնաձայնական բառ, Նոր հայկազյան բառարանում՝ լծ. հառաչել, հաչել և այլն:

Երկրորդ խմբի մեջ են մտնում այսպես կոչված կեղծ գիտական ստուգաբանությունները, որոնք անհավանական ու սխալ են: Դրանք, իբրև գիտական ստուգաբանություններ, գիտական արժեք չեն ներկայացնում, մեծ մասամբ կրում են կամայական բնույթ և հիմնականում հիմնվում են բառերի՝ միմյանց հետ ունեցած պատահական նմանությունների վրա: Այդպիսի ստուգաբանություններից են՝ ապստամբ «իշխանության դեմ կանգնած անհնազանդ, ըմբոստ». ի բաց ստամբակեալ, ստահակեալ, հուն. ἀποστάρτης, ἄφροστιχός. այսինքն՝ բացակացեալ: Արբանեակ «ծառա, սպասավոր, օգնական, հետևորդ». յարբունս հասեալ սպասաւոր էիր:

Միայ ստուգաբանություններ ունեցող բառերից են նաև անապատ, բերան, բարկ, բանջար, գինդ, գերդաստան, դաստառակ, զամբեղ կամ զամբեղայ, խունկ, կածան և այլն:

Մակայն սխալ ստուգաբանությունները «բոլորովին էլ չեն նսեմացնում բառարանի արժեքը. եղած ճիշտ ստուգաբանությունները այնքան շատ են, որ այդ սխալները, անկախ իրենց քանակից, ներելի էին այն ժամանակվա համար»³:

Հայ բառարանագրության պատմության մեջ խոշոր երևույթ էր հին գրական հայերենի բառագանձը պարունակող Նոր հայկազյան բառարանը: Դարագլուխ հանդիսացող այս գործը արժեքավոր է ոչ միայն որպես բացատրական, թարգմանական, այլև որպես ստուգաբանական բառարան: Նոր հայկազյան բառարանը, որ իբրև հայ հին մատենագրության ամբողջական բառարան, անգերազանցելի է մնում նաև այսօր, Էդ. Աղայանի խոսքերով ասած՝ «ամփոփումը, կատարելությունն էր թե՛ իրեն նախորդած շրջանի բառարանագրության և թե՛ Մխիթարի ու մյուսների կողմից սկսված ճիշտ ստուգաբանության. այս դպրոցի սկսած գիտական-ստուգաբանական փորձերն իրենց հաստատումն ու ամփոփումն են գտնում Հայկազյան բառարանում: Այս է, ահա, որ մեզ լիովին իրավունք է տալիս մի լուրջ, լեզվաբանական խոշոր նշանակություն ունեցող գործ համարել բառարանը, մի գործ, որ սահման է հանդիսանում հայ լեզվաբանության առաջին և երկրորդ շրջանների միջև, գործ, որ մի կողմից փակում է հին շրջանը՝ ամփոփելով յուր մեջ նաև նրա որոշ ոչ գիտական կողմերը, մյուս կողմից՝ բացում նոր շրջանը՝ կրելով յուր մեջ այս շրջանի լեզվաբանական գիտության որոշ հատկանիշները»⁴:

Այս բառարանից հետո թեև ստեղծվում են բառարանագրական այլ գործեր, այնուամենայնիվ Նոր հայկազյան բառարանի ստուգաբանությունները հետաքրքրություն են առաջ բերում նույնիսկ այսօր: Նույնիսկ Հ. Աճառյանի՝ հայերեն բառերի հանրագիտարան հանդիսացող «Հայերեն արմատական բառարանը» ստեղծվել է Նոր հայկազյան բառարանի տվյալները հաշվի առնելով: Ի վերջո, պետք է նշել, որ այսօրվա գիտության զարգացման պայմաններում Նոր հայկազյան բառարանի ստուգաբանությունները չեն կորցրել և պահպանում են իրենց պատմական արժեքը:

³ Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1958, էջ 154:

⁴ Նույն տեղում, էջ 165: